ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 92

„08„ 10 2015թ.

ք. Արտաշատ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1791-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կանոնադրության 30-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի թիվ 115-Ն հրամանով՝ հաստատված սոցիալական աջակցության տարածքային գործակալության օրինակելի կանոնադրությունը՝

հաստատել Արարատի մարզպետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների

1) Արտաշատի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) Վեդու սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 2-ի:

3) Մասիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 3-ի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ